636.2
ζ-94

24 ՏԵՊ 2016

Հ Ս Ս Հ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ—ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ՀՈՐԹԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՏԱՋՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՎ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմի
տեղակալ Ֆ. ՑԻԼԿՈՅԻ կողմից.
20/III 36 թ.

Մշակված է Սիբիրի անասնապահական գիտահետազոտական ինստի-
տուտի ճյուքերի յեվ Կամենսկու շրջհողբաժնի ավագ զոոտեխնիկ
ընկ. Ն. Ի. Ստովարենովի ճյուքերի համաձայն։

636.2
Հ-94

ՀԵՌՀՊՀՐԱՏ. 1936 ՅԵՐԵՎԱՆ

ՀՍԽՀ-ССР

17.06.2013
22.086
636.2
Հ-94
767
38

## 1. ԽՈՏԱՋՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտյան Սիբիրի յերկրի Կամենսկու շրջանի կաթնապրանքային ֆերմաներում կատարված փորձերը և մասսայական դիտողությունները ցույց են տալիս, վոր հորթերի կերաբաժնի մեջ մտած խոտաջուրը տալիս է դրական արդյունքներ՝ նպաստելով հորթերի կենդանի քաշի աճին և ստամոքսա-աղիքային հիվանդությունների վերացմանը։

Խոտաջրի գործածությունը, ինչպես ցույց է տվել պրակտիկան, կանխում է ստամոքսա-աղիքային հիվանդությունները, լավացնում է հորթերի ախորժակը և նպաստում է հիմնական կերաբաժնի կերերի ավելի լավ յուրացվելուն։ Բացի այդ, խոտաջուրը պարունակում է վորոշ քանակությամբ սննդարար նյութեր (ոսլա, շաքար, սպիտակուց, հանքային նյութեր, ճարպ և վիտամիններ)։

Դրա շնորհիվ, խոտաջրի գործածությունն ապահովում է հորթերի կենսունակությունը, բարձրացնում է որական աճը և նպաստում է նրանց լրիվ պահպանմանը։

Լավ զարգացած, պնդակազմ, առողջ հորթեր դաստիարակելու համար անհրաժեշտ է, վորպեսզի հորթի կերաբաժնի մեջ խոտաջուր մտցվի վոչ ի հաշիվ նրան տրվող անքաշ կամ յերեսը քաշած կաթի և մյուս կերերի։ Խոտաջուրը հորթերին պետք է տրվի վորպես լրացուցիչ կեր։

## 2. ԽՈՏԱՋՈՒՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Խոտաջուր պատրաստելու ամենալավ ձևը պետք է համարել այնպիսին, վորի միջոցով խոտից հնարավոր է

տանալ վորքան կարելի յե շատ համեղ և սննդարար նյութեր՝ վոչ շատ հեղուկ վիճակում։

1. Խոտաջուր պատրաստելու համար պետք ե վերցնել ամենալավ այլ տեսակի բույսերից բաղկացած կանաչ խոտ, վորը պետք ե քաղված լինի ծաղկման սկզբին, անձրևի տակ չպետք ե մնացած լինի, նրա մեջ պետք ե գերակշռեն շատ տերև ունեցող բույսերը, լոբազգիները և լավ ուտվող այլ բույսեր։ Լավագույն լրացուցիչ կեր են հանդիսանում յերեքնուկն ու կորնգանը։

Պետք ե խստորեն հետևել, վորպեսզի խոտի մեջ չլինեն թունավոր բույսեր (դաժան գորտնուկ, անդուզ և այլն)։

Փոշոտ խոտից չի կարելի խոտաջուր պատրաստել։

2. Վերոհիշյալ վորակի ջոկած խոտը մանրացնում են (կտրատում են ծղոտահատ գործիքով) մինչև 3 սմ մեծությամբ։

3. Մանրացված խոտը լցնում են մաքուր ամանի մեջ (ամենից լավ ե կլայեկած և հատկապես այս նպատակի համար առանձնացրած ամանը) ու վրան լցնում են մաքուր յեռացրած, բայց մինչև Ցելսիուսի 70—80 աստիճանի պաղեցրած ջուր։ Ամանը պինդ փակում են կափարիչով և դնում են տաք տեղ (կեր պատրաստելու բաժանմունքում) մի որ ու գիշեր (առավոտյան պատրաստած, մանրացրած և վրան ջուր լցրած խոտը պետք ե մնա մինչև հաջորդ առավոտ)։

4. Մանրացրած խոտի վրա ջուր պետք ե լցնել մեկ կիլոգրամ խոտին 6—7 լիտր։ Մի կիլոգրամ խոտն իր մեջ ծծում ե մոտ մեկ լիտր ջուր։

5. Մանրացրած խոտից սննդարար նյութերն ավելի լրիվ չափով հանելու համար կարելի յե վարվել նաև հետևյալ կերպ. մանրացրած խոտի վրա լցնել յեռացրած սառը ջուր և աստիճանաբար տաքացնել այն՝ յեռացող ջրով կաթսայի մեջ (ջրավազան) մինչև 70—80 աստիճան



ըստ Ցելսիուսի։ Դրանից հետո ամանը պինդ փակել կափարիչով, ծածկել տաք մնալու համար և դնել տաք շենք։

6. Հաջորդ առավոտ, հորթերին խմեցնելուց առաջ, խոտաջուրը խնամքով քամում են մաղի կամ թանզիֆի միջոցով՝ կլայեկած գլանաձև ունկանի մեջ (կարելի յե գործածել նաև հատկապես այդ նպատակի համար առանձնացված դույլ) և նորից 5 րոպե տաքացնում են յեռացող ջրով կաթսայի մեջ (պաստերիզացիա) մինչև 70—80 աստիճան ըստ Ցելսիուսի։

7. Դրանից հետո խոտաջուրը պաղեցնում են մինչև 36—38 աստիճան ըստ Ցելսիուսի, այսինքն՝ մինչև հորթերին տրվող անքաշ կամ յերեսը քաշած կաթի ջերմության աստիճանը։

Տաքության աստիճանը բոլոր դեպքերում վորոշվում ե միայն ջերմաչափով։

8. Պաղեցնելու ժամանակ խոտաջրի վրա ավելացնում են սովորական աղ, հաշվելով մոտավորապես 10 լիտր խոտաջրին 10 գրամ։

Այս ձևով պատրաստված խոտաջուրը համարվում ե միանգամայն պատրաստ և նրանով կարելի յե կերակրել հորթերին։

9. Լավ, այլատեսակ կամ տարբեր տեսակ բույսերից բաղկացած խոտից (разнотравное сено) պատրաստված խոտաջուրը լինում ե մուգ-դարչնագույն, ունենում ե թարմ ծաղկավետ խոտի հոտ և հաճելի դառնավուն համ։ Խոտաջրի գույնի թունդ լինելը կախված ե խոտի վորակից և ճիշտ պատրաստելուց։

10. Պատրաստված խոտաջուրն օգտագործվում ե միայն մի որվա ընթացքում, յերկրորդ որը պահել վոչ մի դեպքում չի թույլատրվում, վորովհետև նա արագ կերպով փչանում ե։

11. Խոտաջուր պատրաստելու ընթացքում ստացվող չանչը գործածվում ե վորպես կեր՝ կաթնատու անասունների համար։

12. Խոտաջուր պատրաստելու ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել ամանի մաքրության վրա, խնամքով պետք է լվալ այն և չորացնել։ Խորհուրդ չի տրվում գործածել փայտե ամանեղեն (կիսատակառ և այլն)։

## 3. ԽՈՏԱՋՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

13. Լավ վորակի խոտաջուրը պետք է տալ հորթերին վորպես լրացուցիչ կեր՝ նրանց 21 որական հասակից։ Ավելի փոքր հասակում գործածել խորհուրդ չի տրվում։

14. Հորթերին առաջին որերը խոտաջուր պետք է տալ քիչ-քիչ (որական քառորդ լիտր) և աստիճանաբար ավելացնել։ Խոտաջուրը հորթին տրվում է անքաշ կամ յերեսը քաշած կաթի հետ խառնած։

15. Բոլոր հորթերին հավասար քանակությամբ խոտաջուր չի կարելի տալ։ Հորթերին կերակրելիս պետք է խիստ կերպով անհատական մոտեցում ունենալ յուրաքանչյուր հորթին՝ հաշվի առնելով նրա ախորժակը, առողջությունը, կենդանի քաշը և այլն։

16. Մեկ ամսական հորթին կարելի յե տալ որական մոտավորապես մինչև 0,75—1 լիտր խոտաջուր, յերկու ամսական հորթին՝ մինչև 3—3,5 լիտր։

Յերրորդ ամսի վերջին յերեսը քաշած կաթն աստիճանաբար պակասեցվում է, իսկ խոտաջուրն աստիճանաբար ավելացվում է։ 5—6 ամսական հասակում, յերբ հորթն ախորժակով ուտում է չոր և թարմ խոտ, խոտաջուր տալը կարելի յե դադարեցնել։

Հորթերին խոտաջուր խմեցնելու դեպքում խիստ կերպով պետք է հետևել, վորպեսզի նրանց փորը շատ չմեծանա, մի բան, վոր հաճախ առաջ է գալիս մեծ քանակությամբ հեղուկ և մեծածավալ կեր տալուց։

17. Հորթին տրվող խոտաջրի ջերմությունը պետք է անպայման լինի նույնը, ինչ վոր անքաշ կամ յերեսը քաշած կաթինը, այսինքն՝ սկզբնական ժամանակաշրջանում 36-38 աստիճան ըստ Ցելսիուսի։

Խոտաջուրը չի փոխարինում խոտին և վոչ էլ յեռացրած և պաղեցրած մաքուր ջրին. ջուր կարելի յե տալ հորթերին կաթ տալը կրճատելու մոմենտից։

Խոտաջուր տալու ամբողջ ժամանակաշրջանում հորթը պետք է ստանա իր հասակի և քաշի համար անհրաժեշտ կաթի լրիվ նորման։

18. Մինչև 5 ամսական հասակը լրանալը հորթերին կարելի յե տալ յուրաքանչյուր գլխին 400—600 լիտր խոտաջուր՝ անպայման հաշվի առնելով, ինչպես արդեն նշվեց, յուրաքանչյուր հորթի առանձնահատկությունները։

19. Հորթերի աճեցման վերաբերյալ զոոկանոններով և հրահանգով նախատեսված բոլոր մնացած կանոնները, վորոնք վերաբերում են նրանց կերակրմանը, խնամքին և պահպանմանը, խոտաջուր տալու դեպքում ևս մնում են ուժի մեջ։

Հավելված.—Հորթերին խոտաջուր խմեցնելու սքեման։

Հորթերին կերակրելու (выпойка) սխեման՝ օրական 1200 գրամ միջին աճի դեպքում

| Հասակը ամիսներով | Հասակն օրերով | Կաթ | Ցենտրիֆուգած կաթ | Թանաջուր | Վարսակի ալյուր | Քուսպ | Թեփ | Խոտ | Արմատապտուղներ | Սիլոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Լիտրերով | | | Կիլոգրամներով | | | | | |
| | 1 | 5,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 2 | 6,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 3 | 6 5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 4 | 7,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 5 | 7,5 | — | — | — | — | — | — | — | — |
| 1 ամիս | 6—10 | 8,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 11—15 | 9,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 16—20 | 10,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 21—25 | 11,0 | — | 0,25 | — | — | — | — | — | — |
| | 26—30 | 9,0 | 1,5 | 0,5 | 0,30 | — | — | 0,35 | — | — |
| | 31—35 | 8,0 | 2,0 | 1,25 | 0,40 | — | — | 0,40 | — | — |
| | 36—40 | 5,5 | 3,0 | 3.0 | 0,60 | — | — | 0,65 | — | — |
| 2 » | 41—45 | 3,5 | 5,0 | 3,0 | 0.75 | — | — | 0,95 | — | — |
| | 46—50 | 1,75 | 7,0 | 3 0 | 0,90 | — | — | 1,1 | — | — |
| | 51—55 | — | 9,0 | 3,0 | 1,2 | — | — | 1,35 | — | — |
| | 56—60 | — | 10,0 | 3,5 | 1,2 | — | — | 1,4 | — | — |
| | 61—65 | — | 10.0 | 3,5 | 1,2 | — | — | 1,45 | — | — |
| | 66—70 | — | 11,0 | 4,0 | 1,2 | — | — | 1,45 | — | — |
| | 71—75 | — | 10,0 | 5,0 | 1,6 | 0,15 | — | 1,45 | — | — |
| 3 » | 76—80 | — | 9,0 | 5,5 | 1,3 | 0,20 | — | 1,5 | — | — |
| | 81—85 | — | 8.0 | 6,0 | 1,3 | 0,25 | — | 1,55 | — | — |
| | 86—90 | — | 8.0 | 6,0 | 1,3 | 0,35 | 0,10 | 1,55 | — | — |
| | 91—95 | — | 7,0 | 7,0 | 1,4 | 0,40 | 0,10 | 1,55 | 0,5 | — |
| | 96—100 | — | 7,0 | 7,0 | 1 4 | 0,50 | 0,15 | 1,60 | 0,5 | — |
| | 101—105 | — | 6,0 | 8,0 | 1,4 | 0,50 | 0,25 | 1,60 | 1,0 | — |
| 4 » | 106—110 | — | 5,0 | 8,0 | 1,5 | 0,50 | 0,30 | 1,7 | 1,5 | — |
| | 111—115 | — | 5.0 | 8,0 | 1.5 | 0,50 | 0.30 | 1,7 | 2,0 | — |
| | 116—120 | — | 4.0 | 8,0 | 1,5 | 0,60 | 0,40 | 1,8 | 2,0 | — |
| | 121—125 | — | 3,0 | — | 1,5 | 0 60 | 0,40 | 1,8 | 2,0 | 0,5 |
| | 126—130 | — | 2,5 | — | 1,5 | 0,70 | 0,40 | 2,0 | 2.0 | 0,5 |
| 5 » | 131—135 | — | 2,0 | — | 1,6 | 0,70 | 0,50 | 2,1 | 2,5 | 0,5 |
| | 136—140 | — | 2,0 | — | 1,6 | 0,70 | 0,60 | 2,2 | 2,75 | 1,5 |
| | 141—145 | — | 2,0 | — | 1,6 | 0,80 | 0,60 | 2,2 | 3.0 | 2,0 |
| | 146—150 | — | 1,0 | — | 1.6 | 0,80 | 0 60 | 2.3 | 3,75 | 2,75 |
| | 151—155 | — | — | — | 1,6 | 0,80 | 0,70 | 2,4 | 4,5 | 3,0 |
| | 156—160 | — | — | — | 1,5 | 0,90 | 0,70 | 2,4 | 4,5 | 3,0 |
| 6 » | 161—165 | — | — | — | 1,5 | 0,90 | 0,70 | 2,4 | 4,5 | 3,5 |
| | 166—170 | — | — | — | 1,5 | 0,90 | 0,70 | 2,4 | 5,0 | 3,75 |
| | 171—175 | — | — | — | 1,4 | 0,90 | 0,80 | 2,4 | 5,0 | 4,5 |
| | 176—180 | — | — | — | 1,4 | 0,90 | 0,80 | 2,4 | 5,0 | 5,0 |
| Ընդամենը | | 366,3 | 700,0 | 467,5 | 199,75 | 67,75 | 45,5 | 260,5 | 269,0 | 152,5 |



Հորթերին կերակրելու (выпойка) սխեման՝ օրական 800 գրամ միջին աճի դեպքում

| Հասակը ամիսներով | Հասակն օրերով | Կաթ | Ցենտրիֆուգած կաթ | Թանաջուր | Վարսակի ալյուր | Քուսպ | Թեփ | Խոտ | Արմատապտուղներ | Սիլոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Լիտրերով | | | Կիլոգրամներով | | | | | |
| | 1 | 4,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 2 | 4,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 3 | 5,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 4 | 5,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 5 | 6,0 | — | — | — | — | — | — | — | — |
| 1 ամիս | 6—10 | 6,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 11—15 | 7,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 16—20 | 7,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 21—25 | 8,0 | — | 0,25 | — | — | — | — | — | — |
| | 26—30 | 6 5 | 1,0 | 0.75 | 0,15 | — | — | 0.20 | — | — |
| | 31—35 | 5,0 | 2,0 | 1,5 | 0,25 | — | — | 0,35 | — | — |
| | 36—40 | 4,0 | 3.0 | 2.0 | 0,35 | — | — | 0,40 | — | — |
| 2 » | 41—45 | 2,75 | 4,0 | 2,5 | 0,50 | — | — | 0.55 | — | — |
| | 46—50 | 1,5 | 5.0 | 3,0 | 0,60 | — | — | 0,75 | — | — |
| | 51—55 | — | 6,0 | 3,0 | 0,85 | — | — | 0,05 | — | — |
| | 56—60 | — | 7,0 | 3,0 | 0.85 | — | — | 0,05 | — | — |
| | 61—65 | — | 8.0 | 3,0 | 0,85 | — | — | 1,[illegible]5 | — | — |
| | 66—70 | — | 9,0 | 3,0 | 0,85 | — | — | 0,05 | — | — |
| | 71—75 | — | 8,0 | 4,0 | 0,90 | 0,10 | — | 1,10 | — | — |
| 3 » | 76—80 | — | 7,0 | 5,0 | 0,90 | 0,20 | — | 1,2 | — | — |
| | 81—85 | — | 6,0 | 5,0 | 0,95 | 0,20 | — | 1,2 | — | — |
| | 86—90 | — | 5,0 | 5,5 | 0,95 | 0,20 | 0,10 | 1,3 | — | — |
| | 91—95 | — | 5,0 | 6,0 | 0,95 | 0,25 | 0,15 | 1,3 | 0,5 | — |
| | 96—100 | — | 4.0 | 6,0 | 0,95 | 0,30 | 0,20 | 1.3 | 1,0 | — |
| | 101—105 | — | 3,0 | 7,0 | 1,00 | 0,30 | 0.25 | 1.3 | 1,5 | — |
| 4 » | 106—110 | — | 3,0 | 7,0 | 1,10 | 0,30 | 0,25 | 1.3 | 2,0 | — |
| | 111—115 | — | 3,0 | 7.0 | 1,10 | 0,40 | 0,25 | 1,3 | 2,0 | — |
| | 116—120 | — | 2,0 | 7.0 | 1.20 | 0,40 | 0,30 | 1,4 | 2,0 | — |
| | 121—125 | — | 2,0 | — | 1,20 | 0.40 | 0,30 | 1,4 | 2,0 | 0,5 |
| | 126—130 | — | 2,0 | — | 1,30 | 0,50 | 0,30 | 1,4 | 2,0 | 0,5 |
| 5 » | 131—135 | — | 1.5 | — | 1,30 | 0,50 | 0,30 | 1,4 | 2,5 | 0,5 |
| | 136—140 | — | 1,5 | — | 1,30 | 0,50 | [illegible].40 | 1,5 | 2,5 | 1,0 |
| | 141—145 | — | 1,0 | — | 1,20 | 0,60 | 0,40 | 1,5 | 2,5 | 1,5 |
| | 146—150 | — | 1,0 | — | 1,20 | 0,60 | 0,40 | 1,7 | 2,5 | 2,0 |
| | 151—155 | — | — | — | 1,10 | 0,70 | 0,50 | 1,7 | 2,5 | 3,0 |
| | 156—160 | — | — | — | 1, 0 | 0,70 | 0,50 | 1,8 | 2,5 | 3,0 |
| 6 » | 161—165 | — | — | — | 1,10 | 0.70 | 0,50 | 1,8 | 3,0 | 3,0 |
| | 166—170 | — | — | — | 1,10 | 0,70 | 0,50 | 1,9 | 3,0 | 3,0 |
| | 171—175 | — | — | — | 1,10 | 0.70 | 0.50 | 1,9 | 3.0 | 3 5 |
| | 176—180 | — | — | — | 1,10 | 0,70 | 0,50 | 1,9 | 3.5 | 3,5 |
| Ընդամենը | | 268,75 | 500,0 | 407,5 | 146,75 | 50,0 | 33,0 | 195,0 | 202,5 | 125,0 |

Հորթերին կերակրելու (выпойка) սխեման՝ որակած 1000 գրամ միջին աճի դեպքում

| Հասակը ամիսներով | Հասակը օրերով | Կաթ | Յուղազերծ կաթ | Խոտաթուրմ | Վարսակի ալյուր | Քուսպ | Թեփ | Խոտ | Արմատապտուղներ | Սիլոս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Լիտրերով | | | Կիլոգրամներով | | | | | |
| | 1 | 4,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 2 | 5,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 3 | 5,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 4 | 6,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 5 | 6,5 | — | — | — | — | — | — | — | — |
| 1 ամիս | 6—10 | 7,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 11—15 | 7,5 | — | — | — | — | — | — | — | — |
| | 16—20 | 9,0 | — | — | — | — | — | — | — | — |
| | 21-25 | 9,5 | — | 0.25 | — | — | — | — | — | — |
| | 26—30 | 8,0 | 1,5 | 0,5 | 0,18 | — | — | 0,3 | — | — |
| | 31—35 | 7,0 | 2,0 | 0,75 | 0,30 | — | — | 0,5 | — | — |
| | 36— 0 | 6.0 | 3.0 | 2,0 | 0,35 | — | — | 0,5 | — | — |
| 2 » | 41—45 | 4,0 | 5,0 | 2,0 | 0,50 | — | — | 0,75 | — | — |
| | 46—50 | 1.5 | 7,0 | 3,0 | 0,70 | — | — | 0,95 | — | — |
| | 51—55 | — | 8,0 | 3,0 | 0.90 | — | — | 1,0 | — | — |
| | 56—60 | — | 8,0 | 3,5 | 0,97 | — | — | 1,2 | — | — |
| | 61—65 | — | 9,0 | 3,5 | 0,97 | — | — | 1,2 | — | — |
| | 66—70 | — | 10,0 | 4,0 | 1,05 | — | — | 1,2 | — | — |
| 3 » | 71 75 | — | 8,0 | 5,0 | 1,10 | 0,1 | — | 1,3 | — | — |
| | 76—80 | — | 7,0 | 5.5 | 1,20 | 0,2 | — | 1,35 | — | — |
| | 81—85 | — | 7,0 | 6.0 | 1.20 | 0,25 | — | 1,4 | — | — |
| | 86—90 | — | 6,0 | 6,0 | 1.30 | 0,25 | 0,1 | 1,4 | — | — |
| | 91—95 | — | 5,0 | 7,0 | 1,30 | 0,3 | 0.15 | 1,4 | 0,5 | — |
| | 96—100 | — | 5,0 | 7,0 | 1,30 | 0,3 | 0,15 | 1,45 | 1,25 | — |
| | 101—105 | — | 5,0 | 8,0 | 1,30 | 0,4 | 0,25 | 1,45 | 1,25 | — |
| 4 » | 106—110 | — | 4.0 | 8,0 | 1,30 | 0,45 | 0,3 | 1,45 | 1,25 | — |
| | 111—115 | — | 4,0 | 8,0 | 1,40 | 0,45 | 0,4 | 1,5 | 1,5 | — |
| | 116—120 | — | 3.0 | 8.0 | 1.40 | 0,5 | 0.45 | 1,5 | 1.5 | — |
| | 121—125 | — | 3.0 | — | 1,40 | 0,5 | 0,50 | 1,65 | 1,5 | 0.5 |
| | 126—130 | — | 3.0 | — | 1,45 | 0,55 | 0,6 | 1,65 | 1,5 | 0.8 |
| 5 » | 131—135 | — | 2,0 | — | 1,45 | 0,6 | 0,7 | 1,7 | 1,5 | 1,0 |
| | 136—140 | — | 2,0 | — | 1,45 | 0,65 | 0,6 | 1,75 | 2.0 | 1,5 |
| | 141—145 | — | 1,5 | — | 1,45 | 0,75 | 0,6 | 1,95 | 3,0 | 2,0 |
| | 146—150 | — | 1,0 | — | 1 50 | 0,80 | 0,6 | 2,1 | 3,0 | 2.0 |
| | 151—155 | — | — | — | 1,50 | 0.80 | 0,55 | 2,1 | 4,0 | 3.0 |
| 6 » | 156—160 | — | — | — | 1,45 | 0.85 | 0,45 | 2,2 | 4,0 | 3,0 |
| | 161—165 | — | — | — | 1,40 | 0,90 | 0,45 | 2.2 | 4,0 | 3,0 |
| | 166—170 | — | — | — | 1,40 | 0.90 | 0,45 | 2,2 | 5,0 | 3,5 |
| | 171—175 | — | — | — | 1,40 | 0,85 | 0,45 | 2,5 | 5,5 | 4,5 |
| | 176—180 | — | — | — | 1,35 | 0,85 | 0,4 | 3,0 | 5,5 | 5,5 |
| Ընդամենը | | 327,0 | 600,0 | 455,0 | 180,0 | 60,0 | 40,75 | 234,0 | 239,0 | 151,5 |



Пуб. Библиоте
ՀՍԽՀ-ССР
им. А. Мясникян

Թարգմանիչ՝ Խ. Բաբուկյան
Խմբագրեցին՝ Գ. Սարոյան, Նշ. Մալաքյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Ալեքյան
Սրբագրիչ՝ Գ. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 1081
Հրատ. № 356, տիրաժ 2000, պատվեր № 504
Հանձնվել է արտադրության 1936 թ. հուլիսի 17-ին
Ստորագրված է տպագրելու 1936 թ. օգոստոսի 1-ին
3/4 տպ. թերթ, մեկ տպ. թերթում 29720 տպ. նշ.

Գյուղհրատի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

557

Զբ

# Инструкция

по приготовлению и применению сенного настоя (отвара) при выпойке телят

СЕЛЬХОЗГИЗ 1936 ЕРИВАНЬ

ՀՀ Ազգային գրադարան
NL0301149

22.086